

ԴԱՍ 1.

Հիսուսի աշակերտները

Ներածություն

Բանալի համարներ

ՄԱՍ 1.1 Ով է աշակերտը

ՄԱՍ 1.2 Յոթ բնութագրերը

ՄԱՍ 1.3 Աշակերտության հիմքը՝ ճանաչել

Աստծուն

Աստվածաշնչյան ուսումնասիրություն՝

Հիսուսի աշակերտները

Նշումների
համար

Ներածություն

Վերջին տարիներին վերականգնվել է այն սկզբունքը, որ քրիստոնյան պետք է Հիսուսի աշակերտը լինի: Շատերն են ցանկանում ավելի զորավոր քրիստոնեական կյանք ապրել, և այդ կյանքին հասնելու միակ միջոցը աշակերտությունն է, որը սովորեցնում էր հենց Ինքը՝ Հիսուսը:

Աշակերտներն այն քրիստոնյաներն են, ովքեր բաց են անում իրենց կյանքի յուրաքանչյուր ոլորտը Աստծո Խոսքի առջև: Անգլիացի փիլիսոփա Բերքրանդ Ռասելն ասել է. «Ես չեմ կարող լսել ձեր ասածը, որովհետև գիտեմ, թե ովքեր եք»: Այլ կերպ ասած՝ մեծ տարբերություն կա մարդկանց *հավատք* ասածի և ապրած կյանքի միջև:

Այսօր սա եկեղեցու ամենամեծ խնդիրն է:

Աշակերտությունը *հավատքի* կյանք ապրելն է, որը պետք է արտահայտվի մեր կյանքում: Հակոբոս առաքյալն ասում է, որ հավատքն առանց գործերի մեռած է (Հակ. 2:26):

Աշակերտությունը գործ ունի *հավատքի զնի* և *ամբողջական միջրման* հետ: Հիսուսն ասաց, որ մենք կարող ենք Իր աշակերտները լինել, եթե ուրանանք մեր անձը, վերցնենք մեր խաչը և հետևենք Իրեն (Գլուկ. 9:23):

Աշակերտները գիտեն, որ *իրենք կանչված են ամեն օր ապրել հավատքի կյանքը*: Հիսուսն ասաց, որ Իր աշակերտները ուղարկվում են աշխարհ՝ նոր կյանքի դիմամիկ իրականությունը Քրիստոսում ներկայացնելու համար (Հովհ. 17:13–19):

Աշակերտները գիտեն՝ *Քրիստոսի մեծագույն առաքելությունը* աշակերտ պատրաստելն է: Նրանց տրվել են Հիսուսի զորությունն ու իշխանությունը (Մատթ. 28:16–20):

Եվ ավելին՝ աշակերտությունը գործ ունի *վստահության* և *համարչակության* հետ: Սա չի նշանակում վստահություն սեփական ուժերին, սակայն՝ վստահություն Աստծո զորությանը, հավատքին, սիրուն, ուրախությանը և խաղաղությանը, որ Նա տալիս է մեզ Սուրբ Հոգու միջոցով (Գ. Առ. 3:12,16):

Աշակերտները գիտեն, որ *կանչված են իրենց ամենօրյա կյանքում ներկայացնելու Աստծո Որդու զորությունը*: Սա եկեղեցուն ուղղված ամենամեծ կոչն է այսօր:

Բանալի համարներ

Ա Պևտ. 2:21
 Գուկ. 6:40, 9:23, 14:26–27
 Հովհ. 8:31–32

Բ Տիմ. 2:2
 Կող. 3:17
 Ա Հովհ. 2:6

*Նշումների
 համար*

ՄԱՍ 1.1 Ով է աշակերտը

Աշակերտը մեկն է, ով ցանկանում է սովորել Հիսուսից, հնազանդվում է Նրան և հեղինակում է Նրա օրինակին Սուրբ Հոգու զորությամբ:

Աշակերտ բառը 269 անգամ գործածված է ավետարաններում և Գործք Առաքելոցում: Մա ցույց է տալիս, թե որքան կարևոր է այս թեման:

Աշակերտ բառը հունարեն **մաթևրես** բառն է, որը նշանակում է *մարդ, որը սովորում է ուրիշից*: Աշակերտը ոչ միայն լսում է իր Ուսուցչի Խոսքերը, այլ նաև որոշում է հնազանդվել Նրան: Յուրաքանչյուր քրիստոնյա կանչված է աշակերտ լինելու: Անկախ նրանից, թե իր համար ինչ կարժենա, աշակերտը հետևում է Հիսուսին, պահում Նրա Խոսքը, լսում Նրա կանչն ու կատարում հանձնարարությունները:

Աշակերտի ցանկությունն ու ձգտումն է վերականգնել նորկտակարանային քրիստոնեությունը:

Նշումների
համար

ՄԱՍ 1.2

Յոթ բնութագրերը

Ահա այն բնորոշ գծերը, որ Աստված կերտում է յուրաքանչյուր աշակերտի կյանքում, ով որոշում է կայացրել հետևել Հիսուսին:

1) Հնազանդություն Աստծո Խոսքին

Աշակերտը շարունակաբար ապրում է Աստծո Խոսքով, Խոսքի մեջ և Խոսքի միջոցով: Աշակերտը մեկը չէ, որ միայն ժամանակ առ ժամանակ է կարդում և գործում իր Տիրոջ Խոսքով: Նա մեկն է, ով որոշել է լիովին հետևել Տիրոջը: Հիսուսն Իր աշակերտներից պահանջում է **լսել** Իր Խոսքը, **հնազանդվել** այդ Խոսքին և **ապրել** Խոսքով (Հովհ. 8:31):

Հիսուսը միայն Ազատարար ու Փրկիչ չէ, այլ նաև Ուսուցիչ, Տեր և Թագավոր: Քրիստոնեական կյանքը հեշտ ճանապարհի չէ. այն Հիսուսի հանդեպ մեր ունեցած սիրո արտահայտումն է հնազանդության միջոցով:

Աշակերտն ապրում է այն ամենը, ինչ նրան բացվում է Խոսքի միջոցով: Աստծո Խոսքին հնազանդվելը սկզբունք է աշակերտության մեջ, այլ կերպ մենք շատ հեշտությամբ որոշումներ կկայացնենք՝ մեր զգացմունքներից ելնելով: Հոգևոր հնազանդությունը ոչ թե ստրկության, այլ առ Աստված ունեցած սիրո արդյունքն է (Հովհ. 14:15, Ա Հովհ. 5:3): Մեր սրտերը այն հարուստ, արգասավոր հողն է, որտեղ կենդանանում է Աստծո Խոսքը, արմատներ գցում և զորանում (Ես. 55:10, 11, Հակ. 1:21, 22, Մարկ. 4:1-20): Մեր պատասխանատվությունն է՝ բացել մեր սրտերը (Գուկ. 1:37-38) և հնազանդվել (Հովհ. 14:23, Գ. Առ. 5:32):

ii) Նվիրաբերում

Աշակերտը ամբողջովին հանձնում է իր կյանքը Ուսուցչին: Սա նվիրվելն է սիրող Ուսուցչին և ոչ թե այլ մեկին: Այս Ուսուցիչը եսակենտրոն չէ, այլ հետաքրքրված և մտահոգված է մեր բարեկեցությամբ և Աստծո մեջ ունեցած մեր հոգևոր աճով: Աշխարհի ավետարանչական արշավի հիմնադիր Ս.Թ. Սթուդենտը ասել է.

«Եթե Հիսուս Քրիստոսն իրոք Աստված է, և Նա տվել է Իր կյանքն ինձ համար, ապա իմ զոհաբերությունը Նրա համար երբեք չի կարող չափազանց շատ համարվել»:

Հիսուսն իրավունք ունի պահանջել նման զոհաբերություն, որովհետև Նա դրել է Իր կյանքը մեզ համար: Հիսուսն Իր կյանքը կատարելապես զոհեց մեզ համար, և որպես պատասխան՝ նույնն էլ կամենում է, որ մենք անենք՝ նվիրենք մեր կյանքն Իրեն: Նա ցանկանում է, որ վստահենք Իրեն մեր ամեն քայլերը, քանի որ Նա վերցնում է մեր կյանքը և այն կերտում Իր կամքին համապատասխան (Մատթ. 16:24, 25, Հովհ. 10:1–18):

III) Պտղաբեր փոխհարաբերություն Հիսուսի հետ


Ուելյոն Մուրը գրում է. «Քրիստոսի հետ մեր միությունը հնարավոր է դարձնում մի կյանք, որի միջոցով կարող են փրկվել ուրիշները: Երբ ծառը լցվում է բավարար կենսահյութով, հետո՝ երբ չի կարողանում այն պահել իր մեջ, պտուղ է տալիս: Երբ քրիստոնյան լցված է Քրիստոսով, ուրիշները տեսնում են Նրան և լսում Նրա մասին, իսկ հետո հոգևորապես վերածնվում Աստծո թագավորության մեջ: Այսպիսով՝ նորահավատները աշակերտության պտուղն են»:

Մեր կյանքում առանց այսպիսի պտղաբերության Աստծո թագավորությունը չի տարածվի, և Քրիստոսի մարմինը չի աճի:

IV) Անշահախնդիր սեր ուրիշների հանդեպ

Աշակերտը մեկն է, ով որոշում է իր կյանքը սիրով դնել ուրիշների համար, առանց որևէ ակնկալիքի (Մատթ. 22:37–39, Հովհ. 13:34–35, 15:13): Սա մի այնպիսի սիրո տեսակ է, որն Աստված ցուցաբերեց մեր հանդեպ՝ Իր Որդուն ուղարկելով: Դա զոհաբերող սերն է, որը չի ակնկալում իր արարքը ոգևորող արձագանք: Հունարեն բառը, որը գործածվում է Նոր Կտակարանում այս տեսակի սիրո համար, *ագապեն* է. սեր, ըստ որի՝ մյուս մարդիկ ավելի կարևոր են մեզ համար, քան մեր մարմնական ցանկությունները (Ա Կորնթ. 13:4–7):

Նշումների
համար



Նշումների համար

V) Մեծ հանձնարարականի կատարումը

Աշակերտի նպատակը չպետք է լինի միայն մարդկանց Քրիստոսին դարձնելը, այլ ուրիշ աշակերտներ պատրաստելը (Մատթ. 28:18–20, Մարկ. 16:15): Նորադարձը կարող է փոխել իր միտքը, բայց աշակերտը փոխում է իր ամբողջ կյանքը և հետևում Ուսուցչին:

VI) Ուղարկվել Աստծո իշխանությամբ

Աշակերտը ապրում և գործում է ոչ թե իր սեփական իշխանությամբ, այլ Քրիստոսի, Որինն է ողջ իշխանությունը երկնքում և երկրի վրա (Հովհ. 20:21, Մատթ. 10:1–8, Մատթ. 28:18, Գ. Առ. 3:12–16):

VII) Աշակերտը ճանաչում է իր Աստծուն

Աշակերտը ճանաչում է իր Աստծուն, մտերիմ է Նրա հետ այնպես, ինչպես Հիսուսն էր (Հովհ. 10:14–15): Հայր Աստծուն նման կերպով ճանաչելը շատ կարևոր է աշակերտի կյանքում:

Ստուգում

Թվարկի՛ր աշակերտին բնորոշ գծերը.

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____
7. _____

ՄԱՍ 1.3

Աշակերտության հիմքը՝ ճանաչել Աստծուն

Աշխարհում շատ տարբեր կրոններ և կրապաշտություններ կան, որոնք իրենց գաղափարներով մարդկանց կարող են ամբողջական շփոթմունքի մեջ գցել: Հնարավոր է մարդկանց հորդորելով մղել ազատական գոհաբերության, ծայրաստիճան կարգուկանոնին հնազանդվելու, նույնիսկ ինքնագոհաբերման:

Անգամ եկեղեցում կան մարդիկ, ովքեր շատ ակտիվ են գոհաբերության մեջ, և չնայած ճշմարիտ նվիրվածությանը՝ շարժառիթը այս ամենի կարող է ունենալ մարմնական արմատներ, քան աստվածաշնչյան: Օրինակ՝ շատերը կարող են այն որպես պարտականություն կատարել: Պարտականություն կատարելը սխալ զգացում չէ, բայց դա չպետք է Աստծո համար ապրելու գլխավոր դրդապատճառը հանդիսանա: Սա այն դասն էր, որ Եփեսոսի եկեղեցին նորից կարիք ուներ սովորելու (Հայտ. 2:2-5):

Աստծո ցանկությունն է Իր աշակերտների համար, որ **Իրեն անչափ ճանաչեն և սիրեն** (Ուվս. 6:6):

Աստվածաշնչում Աստված Իրեն հայտնում է որպես անհատի Աստված: Աստված կամենում է փոխհարաբերվել մարդու հետ սիրո փոխհարաբերությամբ: Նա արարեց մարդուն հենց այս նպատակով (Ես. 43:7, Եփես. 1:5):

Հին Կտակարանում գործածվում է **յադա** (ճանաչել) բայը: **Յադա** բառի իմաստը փորձառաբար ճանաչելն է: Սա ճանաչողություն է, որը ներառում է մարդու բոլոր զգայարանները: Այն միշտ արտահայտում է անձնական փոխհարաբերություն: Ճանաչել Աստծուն նշանակում է փորձառաբար ճաշակել Նրա զորությունը, սերը, իմաստությունը, շնորհը, համբերությունը և սրբությունը: Հին Կտակարանում Աստծուն ճանաչելը միշտ ներառում է սիրտը և ոչ թե ուղղակի միտքը: **Յադան** արտահայտում է անձնական փոխհարաբերություն, որը ներառում է անձի ամբողջ էությունը:

Նոր Կտակարանը ավելի խորն է տանում՝ ճշգրտորեն ներկայացնելով, թե ինչպես է հնարավոր ավելի ճանաչել Աստծուն այս ճանապարհով: Մարդը, Աստծո Հոգու մեջ վերածնվելով, դառնում է Նրա ընտանիքի անդամը: Հովհաննեսի 3 գլխում Հիսուսը Նիկողեմոսին ասում է, որ Աստծուն ճանաչելու համար պետք է վերստին ծնվել:

Եկեղեցիներին ուղղված իր նամակներում Պողոսը գրում է, որ ին-

Նշումների
համար

Նշումների համար

քը ջերմեռանդորեն աղոթում է, որպեսզի նրանք ճանաչեն Աստծուն խորապես, որը աշակերտի հոգևոր կյանքի հիմքն է հանդիսանում (Եփես. 1:15-17, 3:14-19 և Կող.1:9-10):

Աստծուն ճանաչելը միշտ գործնական մասնակցություն ունի՝ ավելի շատ սեր, հնազանդություն, հույս, հավատք, վստահություն և գործություն (Ա Հովհ. 2:3-6, 4:7-8): Աշակերտը ճանաչում է իր Տիրոջը: Աստծուն անձնապես ճանաչելը ունի շատ հետևանքներ:

Կարդա՛ հետևյալ հատվածները և նշի՛ր այդ **հետևանքները**.

- 1. Դան. 11:32 _____

- 2. Հովհ. 15:20-21 _____

- 3. Հովհ. 17:3 _____

- 4. Հովհ. 10:4 _____

Ո՞րն է ցանկությունը.

- 1. Պողոսի (Փիլիպ. 3:12-14) _____

- 2. Ովսեի (Ովս. 6:3) _____

Հիսուսը եկավ աշակերտներ պատրաստելու համար: Նա մաս քեզ է աշակերտության կոչ անում: Աստվածաշնչյան ուսումնասիրությունը՝ *Հիսուսի աշակերտները* վերնագրով, մեզ ավելին կուսուցանի աշակերտ լինելու հետևանքների մասին, և թե ինչ է այն նշանակում մեր առօրյա կյանքում:

Աստվածաշնչյան ուսումնասիրություն Հիսուսի առակները

Նշումների
համար

Երբուկես տարի շարունակ Հիսուսն անընդմեջ սովորեցնում էր իր առակներներին: Մա ցույց է տալիս, որ Նա կարևորում է առակներությունը: Աստվածաշնչյան այս ուսումնասիրությունը կօգնի մեզ ավելի լավ հասկանալ, թե ինչ է նշանակում լինել Հիսուսի առակները:

Լրացրո՛ւ հետևյալ կետերը:

Երբ ավարտեք բոլոր հարցերին պատասխանելը, ստուգեք այն՝ համաձայն դասընթացի վերջում տեղ գտած պատասխանների:

1. Առավելություն. Հիսուսի առակներն *առավելություն* ունի:

Գրի՛ր այն առավելությունները, որոնց մասին խոսվում է հետևյալ համարներում.

- Հովհ. 15:16, Եփես. 1:4 _____

- Հռովմ. 5:8 _____

- Գաղ. 4:6–7 _____

- Հովհ. 3:16 _____

- Գ. Առ. 1:8 _____

- Հռովմ. 5:1 _____

2. Պատասխանատվություն. Աստծո առակներտ լինելը առավելություն է: Թեև այն Աստծո պարգևն է, սակայն անպայմանականորեն չի տրվում, այլ իր մեջ ներառում է մեծ *պատասխանատվություն*:

Նշումների համար

փաստաստույթություն: Հիսուսի յուրաքանչյուր աշակերտը պետք է շարունակաբար հարցնի ինքն իրեն. *Ի՞նչ կաներ Հիսուսը:*

Ա Հովհ. 4:7–21–ը պարզորոշ կերպով ներկայացնում է այս պատասխանատվությունը: Նկարագրի՞ր այն սեփական բառերով (տե՛ս նաև Մատթ. 22:34–40):

3. Առաջնայնություն. Հիսուսն իր աշակերտներին ուսուցանում էր ճիշտ տեղում դնել *առաջնայնությունները:*

Այս առաջնայնությունները նշված են Ղուկ.14:25–35–ում: Այստեղ Հիսուսը սովորեցնում է մեզ, թե որոնք են Իր առաջնայնությունները: Նա կամենում է, որ նախևառաջ և ամենից շատ Իրեն սիրենք :

Կարդա՛ այս հատվածը Ղուկ.14:25–35–ում և համապատասխանեցրո՛ւ հետևյալ բառերը ճիշտ համարի հետ.

- | | |
|---------------|---------------|
| • Այլ մարդիկ: | • Ղուկ. 14:33 |
| • Նպատակը: | • Ղուկ. 14:26 |
| • Ունեցվածքը: | • Ղուկ. 14:27 |

4. Աշակերտությունը մի մեթոդ է, որը Հիսուսն ընտրեց՝ Ավետարանը աշխարհին հասցնելու համար (Մատթ. 28:18–20): Նա ընտրեց 12 աշակերտների: Նշի՞ր, թե անցյալում ովքեր էին հետևյալ աշակերտները.

Պետրոսը _____ :

Մատթևոսը _____ :

Հովհաննեսը _____ :

Անդրեասը _____ :

Հակոբոսը _____ :

Սիմոն Նախանձահույզը _____ :

_____ :

_____ :

5. Նրանք հասարակ, առանց կրթության մարդիկ էին, սակայն Մատթ. 9:9-ում, Մարկ. 3:13-ում և Գուկ. 5:11-ում պարզ է դառնում, թե Հիսուսն ինչ է պահանջում նրանցից.

6. Աշակերտությունը ներառում է *հնազանդություն Հիսուս Զրիստոսին*:
Տե՛ս Մատթ. 4:22, 10:37, Մարկ.10:35-45: Ներքևում նշված հարաբերություններում ո՞րն էր Հիսուսին հնազանդվելու արդյունքը աշակերտների կյանքում.

• Այլ մարդիկ _____


• Նպատակ _____

• Ունեցվածքը _____

7. Հետևյալ բնութագրերը շատ կարևոր են աշակերտի համար: Համապատասխանեցրո՛ւ ճիշտ պատգամը նշված բնութագրերի հետ.

- | | |
|------------------|--------------------------------|
| • Գուկ. 19:17 | • Հոգևոր քաղց: |
| • Հովհ. 21:15-17 | • Հավատարմություն: |
| • Հովհ. 8:31 | • Միրելի Հիսուսին: |
| • Հովհ. 6:67-68 | • Խոնարհություն: |
| • Հովհ.13:14-15 | • Հնազանդություն Աստծո Խոսքին: |

**Նշումների
համար**



Նշումների համար

8. Աշակերտի համար Հիսուս Քրիստոսի հետ *հավարքի անջնական փոխհարաբերություն* ունենալը շատ կարևոր է: Երբ թույլ ենք տալիս Հիսուսին լինել մեր կյանքի բոլոր ոլորտների Տերը, ապա այդ ժամանակ Նա ապրում է մեր մեջ Իր Սուրբ Հոգու լեցունությամբ: Նա ապահովում է Իրեն նմանվելու և Իր կամքը կատարելու համար բոլոր անհրաժեշտ պայմանները:

Համառոտ ամփոփիլի Հովհ. 15:5–ը ձեր բառերով.

9. Աշակերտը նոր նպատակ է ստանում կյանքում (Հովհ. 15:8, 16).

10. **Պտղաբերության** բանալին հնազանդությունն է: Հնազանդություն նշանակում է ընդունել Հիսուսի իշխանությունը մեր կյանքի վրա և մեր մեջ: Հետևյալ համարներից հայտնաբերում ենք, թե ինչ է ստանում աշակերտը, երբ հնազանդվում է Հիսուսին և դավանում Նրա իշխանությունը: Գրի՛ր, թե ինչ է նա ստանում.

- Մատթ. 10:1 _____
- Գ. Առ. 1:8 _____


11. Ամփոփի՛ր այս ուսուցումը՝ լրացնելով բաց թողնված տեղերը.

- Աշակերտ լինելը մեծ _____ :
- Աշակերտը գիտի հարցը. «Ի՞նչ կաներ _____ :
- Աշակերտը ամենից շատ սիրում է Հիսուսին, քան
 - ա) _____ :
 - բ) _____ :
 - գ) _____ :
- Աշակերտները ցանկանում են _____ իրենց Ուսուցչին:
- Աշակերտները իրենց գործությունը ստանում են _____ Հիսուսի հետ:
- Աշակերտի նպատակը _____ Հայր Աստծուն պտուղ բերելով:

12. Ինչպե՞ս խոսեց այս ուսուցումը քեզ հետ անհատապես.

Ինչպե՞ս ես պատրաստվում կիրառել սա քո կյանքում.

*Նշումների
համար*



Նշումների
համար

Պատասխաններ

1.
 - Ընտրված էր մինչ աշխարհի լինելը:
 - Ընդունում է իր փրկությունը Հիսուսի՝ Փրկչի մահվան միջոցով:
 - Այլևս սարուկ չէ, այլ Աստծո գավակ է՝ ժառանգորդ:
 - Ստանում է հավիտենական կյանք:
 - Ստանում է գորություն Սուրբ Հոգու միջոցով:
 - Խաղաղություն ունի Աստծո հետ:

2. Քանի որ առաջինը Աստված մեզ սիրեց, ապա մենք էլ պետք է Իրեն սիրենք մեր ամբողջ սրտով, շնչով և մտքով, իսկ մեր ընկերոջը՝ ինչպես ինքներս մեզ:
3.
 - Այլ մարդիկ: • Գուկ. 14:26
 - Նպատակը: • Գուկ. 14:27
 - Ունեցվածքը: • Գուկ. 14:33

4.
 - Պերրոսը – ձկնորս:
 - Մարկոսը – մաքսավոր:
 - Հովհաննեսը – ձկնորս:
 - Անդրեասը – ձկնորս:
 - Հակոբոսը – ձկնորս:
 - Միմոնը – ֆանատ (քաղաքական շարժման՝ ընդդիմության անդամ):

5. Գարձի գալ, հնազանդվել և հետևել Իրեն:

6.
 - Հիսուսը առաջինն էր, ում նրանք սիրեցին:
 - Նրանք պետք է թողնեին իրենց սեփական ցանկությունները և սովորեին ծառայել:
 - Նրանք ամեն ինչ թողեցին, որ հետևեին Քրիստոսին:

7.

<ul style="list-style-type: none"> • Գուկ. 19:17 • Հովհ. 21:15–17 • Հովհ. 8:31 • Հովհ. 6:67–68 • Հովհ. 13:14–15 	<ul style="list-style-type: none"> • Հավատարմություն: • Սիրել Հիսուսի: • Հնազանդություն Աստծո Խոսքին • Հոգևոր քաղց: • Խոնարհություն:
--	---

8. Առանց Հիսուսի ոչինչ չենք կարող անել: Մենք Նրանում ենք մնում հնազանդության շնորհիվ: Մենք կախում ունենք Նրանից ամեն ինչում:

9. Փառաբանել Աստծուն՝ պտուղ բերելով:

10. ● Իշխանություն:
● Ջորություն:

11. ● Առավելություն:
● Հիսուսը:
ա) Անձ:
բ) Նպատակ:
գ) Իշխանություն:
● Հնազանդվել:
● Անձնական փոխհարաբերություն:
● Փառաբանել:

12. Անհատապես:

*Նշումների
համար*

